

Պ.

## ԳՐԻԳՈՐ ՎԱՐԴԱՊԵՏ

ՆՈՒԻՐԱԿ - ԺՈՂՈՎԱՐԱՐ ԵՐՈՒՍԱՂԵՄԻ

Վարդապետական աստիճանը ստանալէն յետոյ շատ որոշ չէ որքան ատեն տակաւին մնացած է Ամիգ իր վարդապետին և ուսուցիչին քով: Իր եղբօրորդին վարդապետական գաւազանը ստանալը ըսելէ յետոյ անմիջապէս կը յարէ թէ «գնաց ի Բիւզանդիա, վասն Ս. Երուսաղիմաց պարտուցն ի ժամանակս Տէր Ազարիա կաթողիկոսին»:

Ազարիա կաթողիկոս (1584 Փետրուար 25 — 1601 Յունիս 2 ✱) ժամանակին ամենէն գլխաւոր ուսումնականներէն էր. «աւագ վարդապետն ժամանակին» (Դատիճեցի, էջ 318) որ «ի քարոզութեան և ի դաստասցութեանց ի վարժերոյ զբազմութիւն աշակերտաց ոչ դարեաց»: Իր երեւելի աշակերտներն էին Յովհաննէս Այնթապցի «երամիշ և քարձրաքարքառ քարոզ սիեզերաց», որ իբր Կիլիկիոյ կաթողիկոս իրեն յաջորդեց, և Յակոբ վրդ. Զէյթունցի, որ կարևոր դեր կատարած է Կարին և մանաւանդ Ռոտոսթօ, և «այլ աշակերտք բազումք, որպէս Մեսրոպ . . . Տաթևացի որ ոչ յերկարեաց և վաղանահ եղև և Խարբերդացի Մկրտիչ անուն մի, որ